

Ալկալոիդներ պարունակող դեղաբուսական հումքեր

Էֆեդրա ձխածեսային (խոտ)

Քիմիական կազմ

Խոտում պարունակվում են ալկալոիդներ՝ L-էֆեդրին, D-պսևդոէֆեդրին, L-N-մեթիլէֆեդրին: Պսևդոէֆեդրինը համարվում է էֆեդրինի իզոմեր: Ալկալոիդների պարունակությունը խոտում կազմում է 0,5-3,2%: Ալկալոիդների քանակությունը մեծանում է աշուն-ձմեռ ժամանակաշրջանում:

Էֆեդրայի խոտում պարունակվում են նաև դաբաղային նյութեր մինչև 10%:

Կիրառում

Հիմնական պատրաստուկ համարվում է էֆեդրինի հիդրոքլորիդը: Առավել հաճախ էֆեդրինն օգտագործվում է ալերգիկ բնույթի հիվանդությունների դեպքում (բրոնխիալ ասթմա, եղնջացան), որպես խթանիչ միջոց՝ ԿՆՀ-ի, նաև՝ մորֆինով, սկոպոլամինով և գանգլիոլիտիկներով թունավորումների դեպքում: Պահվում է ըստ B ցուցակի:

Շնդեղ շքեղ (թարմ պալարասոխուկներ)

Քիմիական կազմ

Ամբողջ բույսը պարունակում է ալկալոիդներ, որոնց հիմնական մաս կազմում են՝ կոլխիցին և կոլխամին: Մյուս ալկալոիդները գրականության մեջ հայտնի են տառային անվանումներով՝ U, C, E, B, որոնցից C-ն առկա է գլյուկոալկալոիդ կոլխիկոզիդի ձևով:

Հայտնաբերված են նաև՝ ֆլավոն՝ ապիգենին, արոմատիկ խմբի թթուներ, ֆիտոստերոններ, շաքարներ:

Կոլխիցինի քանակությունը կազմում է պալարասոխուկում՝ 0,25%, ծաղիկներում՝ մինչև 0,8%, առավել շատ սերմերում՝ մինչև 1,2%:

Կիրառում

Կոլխիցինը և կոլխամինը ցուցաբերում են հակաուռուցքային ազդեցություն, սակայն կոլխամինն ավելի քիչ տոքսիկ է, ինչի առումով՝ հարմար բժշկական նպատակներով օգտագործման համար: Կոլխամինն օգտագործվում է 0,5% քսուքի ձևով՝ մաշկի քաղցկեղի և քրոնիկ լեյկոզի բուժման համար (ն/ե կամ ներքին օգտագործման): Կոլխիցինը և կոլխամինը համարվում են կարիոպլաստիկ թույներ և մեծ դեղաչափերով կանգնեցնում են ինտերկինեզի փուլում միտոզը: Կոլխամինը մոտ 5-15 անգամ ավելի քիչ թունավոր է

կոլխիցինից և տարբեր անվանումներով (օմաին, դեմեկուցին, կուցեմիդ և այլն) կիրառվում է ներարկման լուծույթի (3-8մգ օրեկան), դեղահաբերի ձևով չարորակ նորագոյացությունների բուժման համար:

Կոլխիցինն օգտագործվում է պոլիպլոիդային տեսակի բույսերի ստացման համար՝ ազդում է քրոմոսոմային ապարատի վրա:

Խաչախոտ տափակատերև (խոտ)

Քիմիական կազմ

Բույսի բոլոր մասերը պարունակում են ալկալոիդներ՝ պլատիֆիլին և սենեցիֆիլին: Պլատիֆիլինը համարվում է պլատինեցինի և սենեցիաթթվի բարդ եթեր, իսկ սենեցիֆիլինը՝ ռետրոնեցինի և սենեցիֆիլինաթթվի: 2 ալկալոիդներն էլ գտնվում են N-օքսիդ ձևերով:

Ալկալոիդների քանակությունը կոճղարմատում կազմում է 2-5%, իսկ խոտում՝ 0,6-3%:

Կիրառում

Կիրառվում է պլատիֆիլին հիդրոտարտրատը դեղահաբերի և ներարկման լուծույթի ձևով: Պահվում է ըստ A ցուցակի:

Պլատիֆիլինն օժտված է խոլինոլիտիկ և սպազմոլիտիկ ազդեցությամբ՝ նվազեցնում է տոնուսը և հանում բրոնխների, լեղապարկի, աղիների, միզապարկի հարթ մկանների սպազմը, դրականորեն ազդում է արյունատար անոթների սպազմի դեպքում, և կիրառվում է ստամոքսի և աղիների սուր սպազմերի, փորկապության, խոցային հիվանդության, լյարդային և երիկամային կոլիկների, խոլեցիստիտի, բրոնխիալ ասթմայի, ստենոկարդիայի, գլխուղեղի և ծայրամասային արյան շրջանառության խանգարումների դեպքում: Ավելի քիչ տոքսիկ է, քան՝ ատրոպինը: Պլատիֆիլինի օգտագործման դեպքում հազվադեպ հանդիպում է բերանի չորություն և սրտխփոց:

Սենեցիֆիլինը համարվում է դիպլացինի սինթեզի համար նախանյութ:

Խաչախոտ ռոմբատերն (խոտ, կոճղարմատ)

Քիմիական կազմ

Բույսի բոլոր հատվածները պարունակում են ալկալոիդներ՝ սարացին և սենեցիֆիլին: Սարացինը համարվում է պլատինեցինի և 2 թթուների՝ ալգելիկաթթվի և սարացինաթթվի, բարդ եթեր: Ալկալոիդների գտնվում են N-օքսիդ ձևերով:

Ալկալոիդների քանակությունը խոտում կազմում է՝ 1,1-2,4%, կոճղարմատում՝ 1,4-3%: Սարացինը կազմում է բույսում պարունակվող ալկալոիդների 90%:

Խաչախոտ ռոմբատերը համարվում է սարացինի ստացման համար հումք:

Կիրառում

Կիրառվում է սարացինի հիդրոտարտրատը, պահվում է ըստ A ցուցակի: Սարացինն օժտված է ավելի ուժեղ սպազմոլիտիկ ազդեցությամբ, քան՝ պլատինֆիլինը: Կիրառվում է սպաստիկ բնույթի կոլիտների, միզուղիների սպազմի, խոցային հիվանդության, միզրենի դեպքում:

Մահամորմ սովորական (տերև, խոտ, արմատ)

Քիմիական կազմ

Բույսի բոլոր օրգանները պարունակում են ալկալոիդներ՝ հիմնականում հիոսցիամին: Ալկալոիդներից առկա է նաև՝ սկոպոլամին, ցնդող միացություններ՝ N-մեթիլպիրոլիդին, կուսկգիգրին: Ալկալոիդներ առավել շատ կուտակվում են արմատներում՝ 1,3%, տերևներում՝ 0,3-0,75%, ցողունում՝ 0,2-0,6%:

Կիրառում

Մահամորմի տերևներից և խոտից պատրաստում են խիտ և չոր հանուկ, որը ներառված է բազմաթիվ կոմպլեքսային պատրաստուկների կազմի մեջ: Տերևների փոշին կազմում է <<Աստմատոլ>>-ի հիմնական մաս: Արմատներն օգտագործվում են Պարկինսոնիզմի բուժման համար՝ եփուկի կամ դեղահաբերի ձևով՝ <<Կարբելլ>>: Պահվում է ըստ B ցուցակի:

Բանգի սև (տերևներ)

Քիմիական կազմ

Բույսի բոլոր հատվածները պարունակում են ալկալոիդներ, որոնց հիմնական մաս կազմում են հիոսցիամին և սկոպոլամին: Բանգիի տերևներում և սերմերում ալկալոիդների պարունակությունը համեմատաբար քիչ է, ի տարբերություն արմատների:

Կիրառում

Առավել հայտնի է Բանգիի յուղը- յուղային հանուկն օգտագործվում է որպես ցավազրկող միջոց: Բացի այդ Բանգիի տերևները ներառված են <<Աստմատոլ>>-ի կազմի մեջ:

Արջընկույզ սովորական (տերևներ)

Քիմիական կազմ

Ամբողջ բույսը պարունակում է ալկալոիդներ, որոնց հիմնական մաս կազմում են՝ հիոսցիամին և սկոպոլամին: Առավել շատ ալկալոիդներ կուտակվում են ծաղիկներում և տերևներում՝ 0,25-0,4%:

Կիրառում

Արջընկույզի տերևները կազմում են <<Աստմատոլ>> պատրաստուկի հիմնական մաս: Պատրաստուկի կազմի մեջ ներառված են նաև՝ մահամորմի, բանգիի տերևներ, նատրիումի նիտրատ:

Արջընկույզ մեքսիկական (սերմեր, պտուղեր)

Քիմիական կազմ

Բույսի բոլոր հատվածները պարունակում են ալկալոիդներ, որոնք առավել շատ կուտակվում են սերմերում և պտուղներում: Ալկալոիդների հիմնական մաս կազմում է սկոպոլամինը՝ 50%:

Կիրառում

Հումքն օգտագործվում է սկոպոլամինի և ատրոպինի ստացման համար:

Էրիթրոքսիլոն (Կոկայի թուփ) (տերևներ)

Քիմիական կազմ

Ամբողջ բույսը պարունակում է ալկալոիդներ: Առավելագույն քանակը տերևներում է՝ մինչև 1,5%: Ալկալոիդների հիմնական մաս կազմում է կոկաինը (70-80%), որն իրենից ներկայացնում է մեթիլբենզոիլէկգոնին: Ինչպես նաև առկա են՝ ցիննամիլկոկաին, տրուկսիլին, բենզոիլէկգոնին, մեթիլէկգոնին, գիգրին, կուսկգիգրին:

Կիրառում

Կոկայի տերևները վաղուց օգտագործվել են քաղցի զգացողությունն անցկացնելու, մկանային էներգիան պահպանելու, լավ ինքնազգացողության համար: Կոկայի տերևներն օգտագործվում են կոկաին անջատելու նպատակով: Վերջինս արտադրվում է կոկաին հիդրոքլորիդի ձևով և օգտագործվում որպես տեղային ցավազրկող միջոց՝ աչքի, քթի կոկորդի լորձաթաղանթի, միզուղիների: Պահվում է ըստ A ցուցակի: Կոկաինը շատ տոքսիկ է, դեղաչափը գերազանցելու դեպքում առաջանում է կոկաինիզմ:

Ցինխոնա կարմրահյութ (կեղև)

Քիմիական կազմ

Ցինխոնայի կեղևում պարունակվում է մեծ քանակությամբ ալկալոիդներ, որոնցից են՝ խինին, խինիդին, ցինխոնին, ցինխոնիդին: Բացի այդ հայտնի են նաև այլ ալկալոիդներ՝ հիդրոխինին, հիդրոխինիդին, կուպրեին, էպիխինին, էպիխինիդին: Խինային ալկալոիդների կառուցվածքի հիմքում ընկած է խինուլինային և խինուկլիդինային օղակները: Խինինը և խինիդինը, նաև՝ ցինխոնին և ցինխոնիդինը համարվում են ստերեոիզոմերներ:

Ցինխոնայի կեղևում պարունակվում են նաև խիննաթթու, դաբաղային նյութեր՝ պիրոկատեխինի խմբի, դառը գլիկոզիդ՝ խինովին, որը բաղկացած է տրիտերպենային թթվի, խիննաթթվի և մեթիլպենտոզայի մնացորդից:

Կիրառում

Գալենային պատրաստուկների և դեղամիջոցների ստացման նպատակով օգտագործվում է ցինխոնայի կեղև, որը պարունակում է 6,5%-ից ոչ ավելի ալկալոիդներ: Գալենային պատրաստուկներն օգտագործվում են որպես ստամոքսային միջոց, ախորժակը դրդող:

Խինինի ստացման նպատակով օգտագործվում է **Ցինխոնա Լեղջերի** տեսակը (ալկալոիդների մինչև 20% պարունակություն և ցինխոնինի նվազագույն պարունակություն՝ վերջինս խանգարում է խինինի անջատմանը): Հայտնի է <<Տոտախին>> պատրաստուկը, որը պարունակում է կեղևից անջատված ալկալոիդներ: Նաև ստանում են խինինի աղեր՝ խինին սուլֆատ, խինին հիդրոքլորիդ, խինին դիհիդրոքլորիդ, խինիդին սուլֆատ: Խինինի աղերը համարվում են պլազմատիկ թույլներ և կիրառվում են մալարիայի բուժման դեպքում: Խինիդինն օգտագործվում է որպես հակաառիթմիկ միջոց՝ հաճախասրտության և շողացող առիթմիայի դեպքում:

Ոգնագլխիկ սովորական (պտուղներ)

Քիմիական կազմ

Հիմնական ալկալոիդ համարվում է էխինոպսինը, որի քանակությունը հումքում 1%-ից ոչ պակաս պետք է լինի: Ալկալոիդներից բացի, պտուղներում պարունակվում է ճարպային յուղ՝ 26-28%:

Կիրառում

Հումքը կիրառվում է էխինոպսինի նիտրատի ստացման համար, որը ստրիխնինին համարժեք ցուցաբերում է ընդհանուր տոնուսավորող, կմախքային մկանները տոնուսավորող, հետին ուղեղի դրդունակությունն ակտիվացնող ազդեցություն: Պահվում է ըստ A ցուցակի:

Թերմոփսիս նշտարաձև (խոտ, սերմեր)

Քիմիական կազմ

Խոտը պարունակում է մինչև 2,5% ալկալոիդներ, այդ թվում՝ թերմոպսին, հոմոթերմոպսին, մեթիլցիտիզին, պախիկարպին, անագիրին: Թերմոպսինը և անագիրինը իզոմերներ են: Հոմոթերմոպսինը համարվում է ավելի վերականգնված միացություն՝ $C_{17}H_{24}ON_2$:

Ալկալոիդներից բացի, խոտում պարունակվում են գլիկոզիդ՝ թերմոպսիլանցին, որի հիդրոլիզից առաջանում է ֆենոլկարբոնաթթու, առկա են նաև՝ սապոնիններ, դաբաղային նյութեր, խեժեր, լորձ, եթերային յուղ, ասկորբինաթթու:

Սերմերում պարունակվում են 2-3% ալկալոիդներ, որոնց հիմնական մաս կազմում է՝ ցիտիզինը:

Կիրառում

Թերմոպլաստի խոտը համարվում է խորխաբեր միջոց, կիրառվում է ջրաթուրմի ձևով՝ 1:400 հարաբերությամբ (բույսը թունավոր է): Խթանում է մարսողական գեղձերի հյութազատությունը, հակացուցված է ստամոքսի խոցային հիվանդության դեպքում:

Սերմերից ստանում են ցիտիզին, որից պատրաստում են ցիտիտոն պատրաստուկը (0,15% ցիտիզինի լուծույթ): Կիրառվում է շնչուղիների ռեֆլեկտոր ֆունկցիան դրդող, արյան ճնշումը բարձրացնող միջոց՝ վիրահատությունների, տրավմաների, նորածինների ասֆիկսիայի շնչառական կանգի դեպքում:

Կակաչ քնաբեր (պտուղներ, տուփիկներ)

Քիմիական կազմ

Բույսի բոլոր օրգանները պարունակում են ալկալոիդներ, որոնք առավել շատ կուտակվում են տուփիկի կաթնահյութում (մինչև՝ 2,5%), հասունացման ընթացքում: Կակաչում հայտնաբերված են շուրջ 20 ալկալոիդներ՝ իզոխինոլային խմբի:

Մորֆինի ենթախմբի ալկալոիդներից՝ մորֆին, կոդեին, տեբաին
բենզիլիզոխինոլինի և բենզիլտետրահիդրոիզոխինոլին ենթախմբից՝ պապավերին, նարկոտին, նարցեին

Պրոտոբերբերին ենթախմբից՝ կոպտիզին, բերբերին

Պրոտոքինի ենթախմբից՝ պրոտոպին, կրիպտոպին, ալլոկրիպտոպին:

Ալկալոիդների մեծ մասն առաջանում է նորլաուդանոզոլինից, որն էլ իր հերթին առաջանում է 3,4-դիօքսիֆենիլալանինից և 3,4-դիօքսիֆենիլացետալդեհիդից: Հայտնաբերված է, որ ռադիոակտիվ նորլաուդանոզոլինից առաջանում է մորֆին:

Ալկալոիդներից բացի, առկա են սպիտակուցներ, ածխաջրեր, լորձեր, կաուչուկ, օրգանական թթուներ, տրիտերպեններ, պեկտինային միացություններ:

Սերմերում պարունակվում է 40-50% ճարպային յուղ, բաղկացած տրիգլիցերիդներից՝ լինոլեարթթվի և օլեինարթթվի մնացորդներից, օգտագործվում է սննդային և տեխնիկական նպատակներով:

Կիրառում

Ստանում են փոշի, ոգեթուրմ, չոր հանուկ, որոնք կիրառվում են որպես ցավազրկող, հանգստացնող, հակալուծային միջոց: Լայն կիրառում է գտել «Օմնոպոն» պատրաստուկը՝ ալկալոիդների հանրագումար է (նարկոտին, պապավերին, կոդեին, տեբաին), որի 50% մորֆինն է:

Մորֆինը ցուցաբերում է ԿՆՀ-ն հանգստացնող, ցավազրկող՝ տարբեր հիվանդությունների, տրավմաների դեպքում, որոնք ուղեկցվում են ցավով: Մորֆինի երկարատև կիրառումն առաջացնում է կախվածություն (մորֆինիզմ): Իհամեմատ վերջինի՝ օմնոպոնն ավել քիչ տոքսիկ է:

Կոդեինն օգտագործվում է ֆոսֆատի ձևով՝ նվազեցնում է հազային կենտրոնի դրդվածությունը և օգտագործվում է հազի դեպքում:

Պապավերինն կիրառվում է հիդրօքլորիդի ձևով, սպազմոլիտիկ միջոց՝ արյունատար անոթների սպազմի (հիպերտոնիա, ստենոկարդիա, միգրեն), հարթ մկանների սպազմի, բրոնխիալ ասթմայի դեպքում:

Կակաչը, նրանից ստացվող հանուկը, ոգեթուրմը, մորֆինը, օմնոպոնը պահվում են ըստ A ցուցակի (նարկոտիկներ)

Կոդեինը, պապավերինը՝ ըստ B ցուցակի:

Ծիծեռնակախոտ մեծ (խոտ)

Քիմիական կազմ

Ամբողջ բույսը պարունակում է ալկալոիդներ, որոնց քանակը խոտում՝ մինչև 2%, արմատներում՝ մինչև 4%: Ալկալոիդները իզոխինոլինային խմբի են:

Պրոտոբերբերինի ենթախմբի ալկալոիդներից առկա են՝ բերբերին, կոպտիզին, ստիլոպին: Բերբերինով պայմանավորված է կաթնահյութի դեղին գույնը

Պրոտոպինի ենթախմբից՝ պրոտոպին, ալլոկրիպտոպին

Բենզֆենանտրիդինի ենթախմբից՝ խելիդոնին, խելերիտրին, սանգվինարին:

Ալկալոիդները բույսում գտնվում են ազո ձևով և կապված՝ խելիդոնաթթվի հետ:

Ալկալոիդներից բացի պարունակվում են նաև՝ սապոնիններ, ֆլավոնոիդներ, ասկորբինաթթու, վիտամին A, օրգանական թթուներ՝ խնձորաթթու, կիտրոնաթթու, պտուղներում պարունակվում է մինչև 40% ճարպային յուղ:

Կիրառում

Ծիծեռնակախոտից ստացվող պատրաստուկներն օգտագործվում են կոկորդի պապիլոմայի, համակարգային կարմիր գայլախտի սկզբնական փուլում: Ջրաթուրմն օգտագործվում է լյարդի և լեղապարկի հիվանդությունների դեպքում:

Ծիծեռնակախոտի պատրաստուկները կանգնեցնում են չարորակ նորագոյացությունների աճը, նաև ցուցաբերում հակասնկային, բակտերիոստատիկ ազդեցություն՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաների նկատմամբ:

Թխակակաչ դեղին (խոտ)

Քիմիական կազմ

Ամբողջ բույսը պարունակում է ալկալոիդներ, որոնց հիմնական մաս կազմում է գլաուցինը:

Կիրառում

Խոտը համարվում է հումք՝ գլաուցինի հիդրօքլորիդի ստացման (պահվում է ըստ B ցուցակի), ցուցաբերում է հակահազային ազդեցություն: Իր ազդեցության տևողությամբ գերազանցում է կոդեինին և չի առաջացնում կախվածություն:

Ծորենի սովորական

Ծորենի ամուրյան (տերև, արմատ)

Քիմիական կազմ

Բույսը պարունակում է ալկալոիդներ՝ պրոտոբերբերինային խմբի, որոնցից հիմնական մաս կազմում է բերբերինը: Առկա են նաև՝ պալմատին, յատրորիզին, կոլումբամին: Պրոտոբերբերինային խմբի ալկալոիդներից բացի պարունակվում են նաև բիսբենզիլիզոլինային խմբի՝ օքսիականտին, բերբամին:

Կիրառում

Տերևներից պատրաստում են ոգեթուրմ, որը կիրառվում է հետծննդաբերական շրջանում արգանդի հիպոտոնիայի դեպքում, իջեցնում է արյան ճնշումը, նվազեցնում սրտխփոցը, խթանում լեղարտադրությունը:

Արմատներն օգտագործվում են բերբերին սուլֆատի ստացման համար, որը կիրառվում է լեղապարկի հիվանդությունների դեպքում: Պահվում է ըստ B ցուցակի:

Եղջերասունկ (սկլերոցիաներ)

Քիմիական կազմ

Եղջերասունկից առաջին անգամ անջատվել է էրգոտոքսին ալկալոիդը, որից հետո՝ էրգոտամին և էրգոտամինին: Այս 3 ալկալոիդները չեն լուծվում ջրում: Այնուհետև անջատվեց առաջին ջրում լուծվող ալկալոիդը՝ էրգոմետրին: Եղջեասնկում

հայտնաբերված են 7 գույգ ինդուլային ակալոիդներ՝ աջ և ձախ պտտող ստերեոիզոմերներ: Ձախ պտտող, ֆիզոլոգիապես ակտիվ ստերեոիզոմերները համարվում են լիզերգինաթթվի ածանցյալներ, իսկ աջ պտտող, քիչ ակտիվ ստերեոիզոմերները՝ իզոլիզերգինաթթվի ածանցյալներ: Լիզերգինաթթվի և իզոլիզերգինաթթվի կառուցվածքի հիմքում ընկած է 4 ցիկլ՝ ինդոլի շարքի: Էրգոակալոիդները համարվում են էրգոլինի ածանցյալներ: Բոլոր ձախ պտտող իզոմերները համարվում են էրգոլինի՝ լիզերգինաթթվի ածանցյալներ, իսկ աջ պտտողները՝ իզոլիզերգինաթթվի:

Խումբ	Ձախ պտտող ստերեոիզոմեր	Աջ պտտող ստերեոիզոմեր
Էրգոտամին	Էրգոտամին	Էրգոտամինին
Էրգոստին	Էրգոզին	Էրգոզինին
Էրգոտոքսին	Էրգոստին	Էրգոստինին
	Էրգոկրիստին	Էրգոկրիստինին
	Էրգոկրիպտին	Էրգոկրիպտինին
	Էրգոկորնին	Էրգոկորնինին
Էրգոմետրին	Էրգոմետրին	Էրգոմետրինին

Առաջին 3 ակալոիդների մոտ լիզերգինաթթուն կապված է պեպտիդների հետ տարբեր խմբերի:

Էրգոմետրինի կառուցվածքում, որ կոչվում է էրգոբազին, լիզերգինաթթուն միացված է ամինոպրոպանոլի հետ:

Եղջերասունկը ստանդարտավորվել է ըստ ակալոիդների պարունակության՝ 0,05%-ից ոչ պակաս: Բացի էրգոլինի խմբի ակալոիդներից առկա են նաև կլավինի խմբի՝ պեննիկլավին, որը նվազագույն քանակներով է և առավել հաճախ կուտակվում է վայրի տեսակների մոտ:

Պարունակվում են նաև ամիններ (թիրամին, հիստամին), ակիլամիններ (տրիմեթիլամին, մեթիլամին), ամինաթթուներ (վալին, լեյցին), ազոտ պարունակող միացություններ (խոլին, բետաին, ացետիլխոլին), ճարպային յուղ՝ 33-35%, կաթնաթթու, շաքարներ՝ միկոզա, էրգոստերին, որը ճառագայթման տակ վերածվում է վիտամին D-ի, գունանյութեր: Սկլերոցիաների մանուշակագույն գունավորումը պայմանավորված է կարմիր պիգմենտներով՝ էնդոկրոցին, կլավորուբրին:

Կիրառում

Եղջերասունկն օգտագործվում է գինեկոլոգիայում՝ արգանդի կծկումներն ուժեղացնելու, արյունահոսությունը դադարեցնելու համար: Պատրաստուկներն են՝ հեղուկ հանուկ, նոր գալենային պատրաստուկ՝ էրգոտալ (ակալոիդների ֆոսֆատների համագումար), առանձին ակալոիդների աղեր՝ էրգոմետրինի մալեատ, էրգոտամինի հիդրօտարտրատ:

Եղջերասնկի ակալոիդները ցուցաբերում են բարդ ազդեցություն օրգանիզմի վրա՝ ԿՆՀ-ն հանգստացնող, նվազեցնում է հաճախասարտությունը, կիրառվում է նաև միգրենի դեպքում: Ստեղծվել են բազմաթիվ կոմպլեքսային պատրաստուկներ՝ “Նեոգինոֆորտ”, “Մեկաբրեվին” (2-ն էլ պարունակում են էրգոտամինի տարտրատի և էրգոմետրինի մալեատի լուծույթներ), “Բելլոիդ”, “Ակլիման”: Եղջերասունկը և նրա պատրաստուկները պահվում են ըստ B ցուցակի:

Թեյ չինական (տերևներ)

Քիմիական կազմ

Թեյի տերևները պարունակում են՝ կոֆեին (1,5-3,5%), թեոֆիլին, դաբաղային նյութեր (20-24%, <<թեյի տանին>>), ֆլավոնոիդներ, եթերային յուղ, վիտամիններ՝ B₁, B₂, C, նիկոտինաթթու, պանտոտենաթթու:

Կիրառում

Թեյն օգտագործվում է որպես տոնուսավորող, սրտի գործունեությունը և շնչառությունը դրդող, ինչպես նաև հակաթունային միջոց՝ տարբեր թունավորումների դեպքում: Թեյի տերևները համարվում են կոֆեինի ստացման հումք: Կոֆեինը ցուցաբերում է ԿՆՀ-ն և սրտամկանը դրդող ազդեցություն:

Ընձախոտ ջյունհարյան (թարմ խոտ)

Քիմիական կազմ

Ամբողջ բույսը պարունակում է տարբեր խմբի ակալոիդներ՝ ակոնիտի խմբի (ակոնիտ) և անտիզինի խմբի (զոնգորին):

Կիրառում

Խոտի թուրմն օգտագործվում է որպես զրգռող, ցավը շեղող միջոց՝ ռադիկուլիտի, ռևմատիզմի, նյարդաբորբերի դեպքում: Ոգեթուրմը ներառված է <<Ակոֆիտ>>-ի կազմի մեջ:

Ջոք (կեղծ դանձլամեռ) Լոբելի
Ջոք սպիտակ
(կոճղարմատ՝ արմատների հետ)

Քիմիական կազմ

Ամբողջ բույսը պարունակում է ալկալոիդներ: Արմատներում՝ մինչև 2,5%, կոճղարմատում՝ մինչև 1,3%, խոտում՝ մինչև 0,55%: Ջոք սպիտակը պարունակում է ալկալոիդներ՝ յերվերատրային խմբի (յերվին, իգոյերվին, ռուբիյերվին, իգոռուբիյերվին, վերատրամին), ցեվերատրային խմբի (հերմին, պրոտովերատրիդին): Ալկալոիդները գտնվում են 3 ձևով՝ C₂₇-ամինոսպիրտի (ալկամիններ), գլյուկոալկալոիդների և ալկալոիդ-էթերների:

Կիրառում

Գալենային պատրաստուկներն (ոգեթուրմ, Ղանձլամեռի ջուր) օգտագործվում են արտաքին՝ մաշկային վնասումների դեպքում: Անասնաբուժության մեջ օգտագործվում է եփուկը, խառնուրդները (մարսողությունը բարելավող), թուրմը՝ ռնգեղջուրի հիպոգերմատոզի դեպքում:

Կոճղարմատից ստանում են ալկալոիդ-էթերներ, որոնք կիրառվում են որպես հիպոտենզիվ միջոց: Բույսում պարունակվող ալկալոիդները տոքսիկ են:

Ֆենդիներ պարունակող դեղաբուսական հումքեր

Արջախաղող սովորական (տերևներ)

Քիմիական կազմ

Տերևներում պարունակվում է մինչև 6% արբուտին գլիկոզիդ, նաև քիչ քանակությամբ՝ մեթիլարբուտին, հիդրոխինոն: Առկա է նաև ֆենոլաթթուներ՝ գալլաթթու, էլագաթթու, ֆլավոնոիդ՝ հիպերոզիդ, դաբադային նյութեր՝ պիրոգալոլի խմբի (30-35%), ուրսուլաթթու (0,4-0,7%):

Կիրառում

Տերևները կիրառվում են եփուկի ձևով՝ միզուղիների հիվանդությունների դեպքում: Հակասեպտիկ ազդեցությունը պայմանավորված է հիդրոխինոնով, որն առաջանում է արբուտինից և մեթիլարբուտինից հիդրոլիզի արդյունքում: Ցուցաբերում է նաև հակաբորբոքային ազդեցություն:

Հապալասենի կարմիր (տերևներ)

Քիմիական կազմ

Հապալասենու տերևները պարունակում են արբուտին (6-9%), դաբադային նյութեր (մինչև՝ 9%), ֆլավոնոիդներ, ուրսուլաթթու:

Կիրառում

Օգտագործվում է եփուկի ձևով՝ երիկամաքարային հիվանդության, պոդագրայի, ռևմատիզմի դեպքում: Ցուցաբերում է միզամուղ, հակաբորբոքային ազդեցություն:

Մանուշակ եռագույն (խոտ)

Քիմիական կազմ

Պարունակում է ֆլավոնոլային գլիկոզիդ՝ ռուտին, անտոցիանային գլիկոզիդներ՝ դելֆինիդին, պեոնիդին, վիոլամին, եթերային յուղ, որի հիմնական մաս կազմում է սալիցիլաթթվի մեթիլ եթերը, կարոտինոիդներ՝ β-կարոտին (40մգ%), վիոլոքսանտին (զեաքսանտինի դիէպոքսիդ ձևն է), ասկորբինաթթու, սապոնիններ, լորձային պոլիսախարիդներ, տանիդներ:

Կիրառում

Խոտը ներառված է խորխաբեր, միզամուղ հավաքների կազմի մեջ: Խթանում է բրոնխիալ գեղձերի սեկրեցիան, նպաստում է խորխի հեշտ դուրս բերմանը:

Պտեր արական (կոճղարմատներ)

Քիմիական կազմ

Կոճղարմատում պարունակվում է ֆիլիցին (մինչև՝ 5%), որի կազմի մեջ առկա են տարբեր ֆլորոգլյուցիդներ՝ ասպիդինոլ (բաղկացած է ֆլորոգլյուցիդային մեկ օղակից), ալբասպիդին, մյուս միացությունները համարվում են դի-, տրիմերային ֆլորոգլյուցիդներ, որոնց մոնոմերը կառուցվածքով մոտ է ասպիդինոլին: Դիմեր համարվում է ֆլավասպիդինաթթուն, տրիմեր՝ ֆիլիքսաթթու, որքան շատ է կառուցվածքում օղակների առկայությունը, այնքան արտահայտված է դեղաբանական ազդեցությունը:

Կոճղարմատում առկա են նաև՝ օսլա, սախարոզա, դաբաղային նյութեր, ճարպային յուղ:

Կիրառում

Կոճղարմատից պատրաստում են խիտ հանուկ, որը կիրառվում է որպես հակաճիճվային միջոց՝ ժապավենաձև որդերի դեպքում: Պահվում է ըստ B ցուցակի:

Ռոդիոլա վարդագույն (կոճղարմատ և արմատ)

Քիմիական կազմ

Պարունակում է ֆենոլային միացություններ՝ ֆենոլոսպիրտներ և նրանց գլիկոզիդներ, նաև՝ ֆլավոնոիդներ, դաբաղային նյութեր: Ֆենոլոսպիրտ համարվում է քսիֆենիլէթանոլը, որը հայտնի է թիրոզոլ անվամբ և հումքում գտնվում է գլիկոզիդի ձևով: Այդ Գլիկոզիդը սկզբում կոչվում էր ռադիոլոզիդ, այժմ՝ սալիդրոզիդ, որի պարունակությունը հումքում կազմում է 0.5-1%: Ֆլավոնոիդներից առկա է՝ կվերցետին, հիպերոզիդ, կեմպֆերոլ, իզոկվերցետին: Պարունակում է պիրոգալոլի խմբի դաբաղային նյութեր (մինչև՝ 20%), եթերային յուղ, օրգանական թթուներ՝ գալլաթթու, կիտրոնաթթու, խնձորաթթու, շաքարներ՝ գլյուկոզա և սախարոզա, ճարպեր, միկրո-, մակրոտարրեր, Mn: Բույսը մանգանֆիլ է:

Կիրառում

Կիրառվում է որպես խթանող, աշխատունակությունը, օրգանիզմի դիմադրողականությունը բարձրացնող, հակահիպնոտիկ միջոց: Աղապտոզեն ազդեցությամբ նման է արալիագգի բույսերին (Ժենշեն, Էլեուտերոկոկկ): Կիրառվում է հեղուկ հանուկի ձևով, որում սալիդրոզիդի պարունակությունը 0,5% է:

Կումարիններ

Իշաովույտ դեղատու (խոտ)

Քիմիական կազմ

Պարունակում է կումարին (0.4-0.9%), դիհիդրոկումարին (մելիլոտին), դիկումարոլ(4-օքսիկումարինի դիմերային ձևն է), π-կումարաթթվի գլիկոզիդ՝ մելիլոտոզիդ, նաև՝ պուրին (ալլանտոին, ալլանտոինաթթու), խոլին, լորձեր: Կումարինն ունի թարմ խոտի հոտ, որն ուժեղանում է չորացնելիս:

Կիրառում

Կիրառվում է որպես հակակոագուլյանտ՝ թրոմբոֆլեբիտի, անոթային ախտահարումների դեպքում: Խոտից ստանում են <<Դիկումարին>> պատրաստուկ:

Ձիու շագանակ (սերմեր)

***Aesculus hippocastanum* L.**

Շագանակագգիներ

Hippocastanaceae

Մինչև 30մ բարձրությամբ խիտ սաղարթով ծառ է, տերևները՝ հակադիր, 5-7 մատնաձև կտրտված, երկար կոթունավոր, ծաղիկները՝ առանձին թերթիկավոր, զիգոմորֆ, պտուղը՝ խոշոր, օվալաձև, եռակողմ բացվող տուփիկ, սերմերը՝ փայլուն, փշոտ, շագանակագույն: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին:

Քիմիական կազմ

Սերմերը պարունակում են էսկուլին գլիկոզիդ, որը քայքայվելիս առաջացնում է էսկուլետին (6.7-դիօքսիկումարին) և գլյուկոզա: Նաև հայտնաբերված է այլ կումարինային գլիկոզիդ՝ ֆրակսին, որը քայքայվելիս առաջացնում է ֆրակսետին (6-մետօքսի-7.8-

դիօքսիկումարին) և գլյուկոզա: Առկա են ֆլավոնոիդներ՝ կվերցետինի և կեմպֆերոլի բի- և տրիոզիդներ: Բնորոշ միացություն է համարվում տրիտերպենային սապոնին՝ էսցինը, որի ազլիկոնը էսցիգենինն է (β-ամիրինի խմբի): Սերմերում առկա է օսլա, ճարպային յուղ, սպիտակուցներ, դաբաղային նյութեր:

Կիրառում

Սերմերից ստանում են ջրասպիրտային հանուկ՝ «էսկուզան», որը կիրառվում է թրոմբոզի, երակային կանգի, հեմորոյի դեպքում: Ազդեցությունը հիմնված է էսկուլինի և ֆրակսինի վրա: Այդ նպատակով հոմեոպատիայում կիրառվում են նաև ոգեթուրմը և քուրքը:

Տերևներից ստացվող 10% ոգեթուրմը կարոտինոիդների պարունակության շնորհիվ կիրառվում է արգանդային և հեմորոյի դալ արյունահոսությունների դեպքում:

Ֆուրոկումարիններ Հացադեղ մեծ (պտուղներ)

Քիմիական կազմ

Պտուղներում պարունակվում է ֆուրոկումարիններ (0.5% և ավելի), որոնց հիմնական մաս կազմում են բերգապտեն և իզոպիմպինելին (պտորալենի մեթօքսիածանցյալներ են):

Կիրառում

Ստանում են «Ամմիֆուրին» պատրաստուկը, որը ֆուրոկումարինների ամբողջություն է: «Ամմիֆուրին»-ը դեղահաբերի և 2% լուծույթի ձևով կիրառվում է վիտիլիզոյի և բնային ճաղատության դեպքում:

Հովանոցազգի բույսերից ֆուրոկումարիններ է պարունակում նաև **Պաստեռնակի պտուղները (Pastinacea sativa L.):** Պաստեռնակի պտուղներից ստանում են «Պաստինացին» (նվազեցնում է արյան բարձր ճնշումը) և «Բերոկսան» (կիրառվում է վիտիլիզոյի և բնային ճաղատության դեպքում): Պաստեռնակի սերմերում պարունակվում են ֆուրոկումարիններ՝ պաստինացին, իմպերատորին և իզոպիմպինելին:

Ֆուրանոքրոմոններ Հացադեղ ատամնային (պտուղներ)

Քիմիական կազմ

Բույսի բոլոր հատվածներում պարունակվում է ֆուրանոքրոմոններ՝ կելլին, վիսնագին, պիրոկումարիններից՝ վիսնադին, ֆլավոնոիդներ: Հիմնական ազդող նյութ համարվում է կելլինը (մինչև՝ 2.5%), որը գերակշռում է հասունացած պտուղներում, չհասունացած պտուղներում նույնպես շատ է:

Կիրառում

Ստանում են «Կելլին» պատրաստուկը, որը դեղահաբերի ձևով կիրառվում է քրոնիկ ստենոկարդիայի դեպքում: Այս պատրաստուկին համարժեք են նաև «Դաուկարին» և «Անետին» պատրաստուկները, որոնք ստանում են համապատասխանաբար Գազար մշակովի և Անիսոն բանջարանոցային տեսակի բույսերից: Նշված 2 պատրաստուկները պարունակում են ֆուրանոքրոմոններ և ցուցաբերում են սպազմոլիտիկ ազդեցություն:

Լիզաններ Կիտրոնաթուփի չինական (պտուղներ, սերմեր)

Քիմիական կազմ

Հաստավել է, որ կիտրոնաթուփի տոնուսավորող ազդեցությունը պայմանավորված է նրանում առկա եթերային յուղով և օրգանական թթուներով: Առաջին լիզանը, որ հայտնաբերվել է՝ սխիզանդրինն է: Այժմ հայտնի է, որ կիտրոնաթուփում առկա է մինչև 10 լիզաններ, և պարունակվում են բույսի բոլոր հատվածներում: Հասունացած պտուղներում և սերմերում 4-5%, ցողունում՝ 5-9%, կոճղարմատի կեղևում՝ 5-13%: Հիմնական լիզանը՝ սխիզանդրինն է, նաև առկա են այլ լիզաններ՝ դեզօքսիսխիզանդրին, γ-սխիզանդրին, սխիզանդրոլ: Առկա են ֆլավոնոիդներ, կատեխիններ, անտոցիաններ, եթերային յուղ, որի քանակությունը ցողունի կեղևում՝ մինչև 3%: Տերևների և կեղևի եթերային յուղն օժտված է կիտրոնի բույրով, իսկ սերմերի եթերային յուղի հոտը տհաճ է: Պտուղներում առկա են նաև օրգանական թթուներ՝ կիտրոնաթթու (11%), խնձորաթթու (10%), ասկորբինաթթու՝ 500մգ%, պեկտինային նյութեր, շաքար: Սերմերը հարուստ են ճարպային յուղով՝ 33%:

Կիրառում

Պտուղներից և սերմերից ստանում են ոգեթուրմ, որը ցուցաբերում է տոնուսավորող ազդեցություն, խթանում՝ աշխատունակությունը, բարձրացնում օրգանիզմի դիմադրողականությունը, մկանային ուժը, մարմնի քաշը:

Կիտրոնաթուփի հյութն օգտագործվում է ստամոքսի ցածր թթվայնության դեպքում:

Ռապունտիկ ասպուրանման Մարալի արմատ (կոճղարմատ՝ արմատների հետ)

Քիմիական կազմ

Կոճղարմատում և արմատներում առկա են խեճային միացություններ, եթերային յուղ, դաբաղային նյութեր (մինչև՝ 5%), ալկալոիդներ, կարոտին, ասկորբինաթթու, լիզնաններ:

Կիրառում

Պատրաստուկներն օգտագործվում են որպես տոնուսավորող միջոց՝ նյարդային համակարգի ֆունկցիոնալ խանգարումների, մտավոր և ֆիզիկական ծանրաբեռնվածության, աշխատունակության ընկճման, քրոնիկ ալկոհոլիզմի դեպքում: Կիրառվում է հեղուկ հանուկի ձևով, հայտնի է նաև վիտամինային ըմպելիքը՝ «Սայան»:

Անտրացեններ պարունակող դեղաբուսական հումքեր

Խրիզացինի ածանցյալներ Կասիա նեղտերև (տերև, պտուղ)

Քիմիական կազմ

Տերևները պարունակում են մինչև 3% անտրագլիկոզիդներ, այդ թվում՝ գլյուկո-ալոն-էմոդին, գլյուկոռեին, դիմերային միացություններ, որոնք ռեինի դիանտրոնային ձևն են՝ սեննոզիդներ A, B: Նաև առկա է ֆլավոնոլներ՝ իզոռամնետին, կեմպֆերոլ և նրանց գլիկոզիդներ, խեժային միացություններ, վերջիններն առաջացնում են ցավ աղիներում:

Կիրառում

Կիրառվում է թուրմի ձևով: Խեժային միացություններից ազատվելու համար, ստացված թուրմը քամում են թանգիֆով: Պտուղներում խեժերը բացակայում են, այդ առումով պտուղներից պատրաստված թուրմի լուծողական ազդեցությունն ավելի մեղմ է: Կասիան օգտագործվում է նաև լյարդի և լեղապարկի հիվանդությունների դեպքում: Ներառված է լուծողական և հակահեմոռագիկ հավաքների կազմի մեջ: Լուծողական ազդեցությունը արտահայտվում է պատրաստուկներն ընդունելուց 6-10ժ անց:

Դժնիկ լաստենանման Դժնիկ դյուրաբեկ (կեղև)

Քիմիական կազմ

Թարմ կեղևում պարունակվում է առաջնային անտրանոզիկոզիդ՝ ֆրանգուլյարոզիդ, օժտված փսխաբեր ազդեցությամբ: Անտրանոլներն օքսիդանում են նույնիսկ օդի թթվածնի ազդեցությամբ, ինչի առումով հումքն օգտագործում են 1 տարի պահելուց հետո կամ ֆրանգուլյարոզիդի օքսիդացումն արագացնում են 1ժ 100°C տաքացնելուց հետո: Արդյունքում ֆրանգուլյարոզիդը վերածվում է գլյուկոֆրանգուլինի, որից էլ գլիկոզիդը անջատվելիս առաջանում է ֆրանգուլին, վերջինից էլ՝ ֆրանգուլաէմոդին և ռամնոզա: Այս առումով բեկտենու կեղևում միաժամանակ կարող է լինել գլյուկոֆրանգուլին, ֆրանգուլին, ֆրանգուլա-էմոդին: Նաև՝ խրիզոֆանոլ, ֆիսցինոն: Տերևներում առկա է մինչև 2% ասկորբինաթթու:

Կիրառում

Կիրառվում է եփուկի, հեղուկ և չոր հանումկների ձևով, նաև տարբեր հավաքների կազմի մեջ ներառված որպես լուծողական միջոց: Հայտնի չոր ստանդարտիզացված պատրաստուկը՝ «Ռամնիլ», որը պարունակում է 60-65% օքսիմեթիլանտրախինոններ (45% ֆրանգուլին, 12% ֆրանգուլաեմոդին, 6% խրիզոֆանոլ): Պատրաստուկների կիրառման հիմնական ցուցումներն են քրոնիկ փորկապություն և աղիների ատոնիա:

Դժնիկ լուծողական (պտուղներ)

Քիմիական կազմ

Օքսիմեթիլանտրախինոնների կազմով համանման է դժնիկ լաստենանմանի կեղևին: Դժնիկ լուծողականի պտուղներում առկա են գլյուկոֆրանգուլին (կոչվում է ռամնոկատարտին), ֆրանգուլին (ռամնոքսանտին), ֆրանգուլա-եմոդին, ժաստերին, որը ֆրանգուլա-եմոդին-անտրանոլի բիոգիդ ձևն է: Օքսիմեթիլանտրախինոնների քանակությունը չի գերազանցում 1%: Պտուղներում առկա են նաև ֆլավոնոլներ՝ ռամնոցիտրին, ռամնետին, կվերցետին, կեմպֆերոլ, շաքարներ, պեկտինային նյութեր: Ճյուղերի կեղևում պարունակվում է առաջնային անտրազիկոզիդ՝ ռամնոկատարտիկոզիդ, խրիզոֆանոլ և այլ անտրազիկոզիդներ (7%), տերններում՝ ասկորբինաթթու (մինչև՝ 3%):

Կիրառում

Կիրառվում է եփուկի ձևով որպես լուծողական միջոց՝ ատոնիկ և սպաստիկ փորկապությունների դեպքում: Ազդեցությունը դրսևորվում է հաստ աղում:

Ռևանդ տանգուոյան (արմատներ)

Քիմիական կազմ

Արմատներում պարունակվում է 2 խմբի ազդող նյութեր՝ անտրազիկոզիդներ և դաբադային նյութեր: Անտրազիկոզիդների քանակությունը 5% ավելի է, որնցից են՝ գլյուկո-ռեում-եմոդին, խրիզոֆանեին, ռեոխրիզին, գլյուկո-ռեին, գլյուկո-ալոե-եմոդին: Առկա են նրանց առաջնային ձևերը՝ անտրանոլները: Նրանց օքսիդացված (անտրախինոններ) և վերականգնված (անտրանոլներ) ձևերի քանակությունը փոփոխվում է կախված վեգետացիոն շրջանից: Ամռան-աշնան ընթացքում անտրախինոնների

քանակությունը գերակշռում է, ձևոսան ընթացքում՝ անտրանոլների: Հումքի պահպանման ընթացքում անտրախինոնները նույնպես գերակշռում են, որը պայմանավորված է անտրանոլների ֆերմենտատիվ օքսիդացմամբ: Անտրազիկոզիդներից արմատներում հայտնաբերվել է դիոեինը: Դաբադային նյութերի քանակությունը մինչև 12% է: Վերջինները հիդրոլիզվող (գալոտանիններ) են, որոնց հիդրոլիզից առաջանում է գալլաթթու: Առկա են նաև խեժեր, օսլա, պեկտինային նյութեր:

Կիրառում

Ռևանդի պատրաստուկները՝ չոր հանուկ, ոգեթուրմ, օշարակ, փոշի, դեղահաբ, կիրառվում են որպես լուծողական միջոց (պայմանավորված՝ անտրազիկոզիդներով): Մպիրտային պատրաստուկները ցուցաբերում են կապող ազդեցություն (գալոտանիններ), լավացնում աղիների գործունեությունը: Ազդեցությունը նաև պայմանավորված է պատրաստուկների դեղաչափից: Փոքր դեղաչափով դրսևորում են կապող (տանոզիկոզիդներ), մեծ դեղաչափերով՝ լուծողական (անտրազիկոզիդներ):

Ռևանդի անտրախինոնների հիման վրա ստեղծվել է պատրաստուկ՝ <<Խրիզատոբին>>, որի կազմի մեջ անտրացեն ածանցյալների, էմոդինի, ֆիսցինի, խրիզոֆանոլի վերականգնված ձևերն են: Պատրաստուկն օգտագործվում է պտորիազի դեպքում:

Ավելուկ ձիու (արմատներ)

Քիմիական կազմ

Իտարբերությունն ռևանդի՝ անտրազիկոզիդների քանակությունը քիչ է, սակայն բավարարում է (4%) բժշկական նպատակով օգտագործման համար: Անտրազիկոզիդներից առկա են՝ ռեում-էմոդին, խրիզոֆանոլ: Առկա են նաև դաբադային նյութեր (13-15%) պիրոկատեխինի խմբի, ֆլավոնոիդներ:

Կիրառում

Կիրառվում է եփուկի և փոշու ձևով կոլիտի, էնտերոկոլիտի, հեմոկոլիտի դեպքում:

Ալիգարինի ածանցյալներ
Տորոն ներկատու (կոճղարմատ՝ արմատների հետ)

Քիմիական կազմ

Պարունակվում է 5-6% օքսի- և օքսիմեթիլանտրափինոններ՝ ազատ ձևով և գլիկոզիդի ձևով: Հիմնական գլիկոզիդ համարվում է ռուբերիտրինաթթուն (ալիգարին-2-քսիլոզիլոզյուկոզիդ): Ազդող նյութերի կազմի մեջ առկա են նաև ռուբիադին- գլյուկոզիդ, ալիգարին, ռուբիադին, մունիստին: Առկա են նաև՝ օրգանական թթուներ (կիտրոնաթթու, խնձորաթթու), շաքարներ (մինչև՝ 15%), պեկտինային նյութեր, սպիտակուցներ:

Կիրառում

Տորոնի պատրաստուկները (չոր հանուկի, արմատի փոշու դեղահաբեր) կիրառվում են երիկամաքարային, միզաքարային հիվանդությունների, պոդագրայի դեպքում: Նրանք նպաստում են ֆոսֆատային, օքսալատային, ուրատային քարերի մանրեցմանը: Արմատները ներառված են կոմպլեքսային պատրաստուկի <<Ցիստենալ>> կազմի մեջ:

Անտրացենի կոնդենսված ածանցյալներ
Սրոհունդ ծակոտկեն (խոտ)

Քիմիական կազմ

Հիմնական ազդող նյութեր համարվում են՝ հիպերիցին և պսևոհիպերիցին, որոնց քանակությունը կազմում է 0.5%: Վերջիններն ուղեկցվում են խեժով (մինչև՝ 10%), ֆլավոնոիդներով, դաբադային նյութերով: Ֆլավոնոիդներն առկա են ֆլավոնոլային գլիկոզիդների ձևով՝ հիպերոզիդ 1% (կվերցետինի գալակտոզիդ է), ռուտին, կվերցետրին: Դաբադային նյութերը (10%) կոնդենսված են՝ պիրոկատեխինի խմբի: Նաև առկա է կարոտին՝ մինչև 55մգ%:

Կիրառում

Ոգեթուրմի ձևով կիրառվում է որպես հակաբորբոքային, կապոդ, հակասեպտիկ միջոց՝ ադինների բորբոքումների, կոլիտի, ստոմատիտի, լնդաբորբերի դեպքում: Յուղային հանուկը կիրառվում է ստամոքսի խոցի բուժման համար:

Սրոհունդի խոտից ստացվում է հակաբակտերիալ պատրաստուկ՝ <<Իմաին>>, որը կիրառվում է ինֆեկցիոն վերքերի, այրվածքների, խոցերի դեպքում, սրոհունդի նյութերը խթանում են վնասված հյուսվածքների վերականգնումը: Հիպերիցինն օժտված է ֆոտոսենսիբիլիզացնող ազդեցությամբ՝ բարձրացնում է մաշկի զգայունությունը լույսի վնասակար ազդեցության հանդեպ:

Ֆլավոնոիդներ պարունակող դեղաբուսական հումքեր

Ֆլավոններ և ֆլավոնոլներ Ալոճենի փշոտ (ծաղիկ, պտուղ)

Քիմիական կազմ

Ծաղիկներում պարունակվում է ֆլավոնոլային գլիկոզիդներ (մոնոգլիդներ), հիպերոզիդ և կվերցիտին, որոնց ազիկոնը կվերցետինն է: Մյուս ֆենոլային միացություններից հանդիպում են սրճաթթու, քլորոգենաթթու, նաև՝ ագետիլխոլին, խոլին, տրիմեթիլամին: Հոտը պայմանավորված է եթերային յուղով և որոշ ցնդող միացություններով:

Պտուղներում պարունակվում է հիպերոզիդ, սրճաթթու, քլորոգենաթթու, դաբաղային նյութեր, տրիտերպենային սապոնիններ (ուրսուլա-, օլեանոլաթթու), ճարպային յուղ, β-սիտոստերին (վերջին 2-ը՝ սերմերում), սորբիտ, խոլին, ագետիլխոլին:

Տերևներում առկա է ֆենոլային միացություններ, գլիկոզիդ՝ վիտեքսին, տրիտերպենային սապոնիններ՝ կրատեգոլա-, ականտոլաթթու:

Կիրառում

Ալոճենու պատրաստուկները կիրառվում են որպես կարդիոտոնիկ միջոց՝ սրտի գործունեության խանգարման, հազվասրտության, գերճնշումային հիվանդության դեպքում:

Պատրաստուկները՝ ծաղիկների ոգեթուրմ, պտուղների հեղուկ հանուկ, վերջինը ներառված է նաև «Կարդիովալեն»-ի կազմի մեջ: Պտուղներից ստանում են նաև «Կրատեգիդ» պատրաստուկ:

Առյուծագի սրտային (խոտ)

Քիմիական կազմ

Կենսաբանորեն ակտիվ միացություններ են հանդիսանում ֆլավոնոլային գլիկոզիդները՝ ռուտին: Առկա են նաև՝ դաբաղային նյութեր (2%), սապոնիններ և եթերային յուղ (0,03%), ալկալոիդ՝ ստահիդրին՝ (0,4%):

Կիրառում

Հայտնաբերված է բույսի հանգստացնող ազդեցությունը: Խոտից ստանում են ոգեթուրմ, որը կիրառվում է սիրտ-անոթային ներոզի, հիպերտոնիայի դեպքում, ազդեցությամբ համանման է կատվախոտին:

Ջրային մատիտեղ (խոտ)

Քիմիական կազմ

Պարունակում է ֆլավոնոլներ, կվերցետին և նրա ածանցյալներ, որոնց քանակը՝ 2,5-3%:

Արմատներում առկա է օքսիմեթիլանտրախինոն, որը բնորոշում է նրանց բիոգենետիկ կապը ֆլավոնոնային և այլ ֆենոլային միացությունների հետ:

Առկա են դաբաղային նյութեր (3%), վիտամիններ՝ C, K:

Կիրառում

Բույր փ տեսակներին բնորոշ է արյունահոսությունը դադարեցնող ազդեցությունը՝ արգանդային արյունահոսությունների դեպքում: Այս ազդեցությունը ավելի թույլ է ի տարբերություն թոչնային մատիտեղի, սակայն արտահայտված է ցավազրկող ազդեցությունը: Մատիտեղ ջրայինից ստանում են հեղուկ հանուկ, <<Հիդրոպիպերին>> (ֆլավոնոլային գլիկոզիդներ), հակաթուրքային մոմիկներ, մատիտեղ պարսկականից՝ հեղուկ հանուկ, մատիտեղ թոչնայինից՝ <<Ավիկուլարին>>:

Պարսկական մատիտեղի պատրաստուկները ցուցաբերում են նաև թույլ լուծողական ազդեցություն՝ ատոնիկ, սպաստիկ փորկապությունների դեպքում:

Մատիտեղ թոչնայինը ցուցաբերում է միզամուղ ազդեցություն՝ միզաքարային, երիկամաքարային հիվանդության, միզուղիների բորբոքման դեպքում, սիլիկաթթվի պարունակության շնորհիվ կիրառվում է նաև թոքերի տուբերկուլյոզի դեպքում, թարմ հավաքված խոտը՝ վերք լավացնող միջոց:

Անթառամ ավազային (ծաղիկներ)

Քիմիական կազմ

Ծաղիկներում պարունակվում են ֆլավոնոլներ՝ ֆլավանոն՝ նարինգենին (ազտ ձևով և 5-մոնո-, դիգլյուկոզիդի ձևով), որի մոնոգլիկոզիդ ձևը կոչվում է սալիպուրպոզիդ, ֆլավոն՝ ապիգենին (ազտ ձևով և 5-մոնոգլյուկոզիդի ձևով), ֆլավոնոլ՝ կեմպֆերոլ (3-դիգլյուկոզիդի ձևով): Առկա են նաև ֆտալաթթվի անհիդրիդ, վիտամին K, դաբաղային նյութեր, եթերային յուղ (0,04%):

Կիրառում

Կիրառվում է լյարդի, լեղապարկի, լեղուղիների սուր և քրոնիկ հիվանդությունների դեպքում: Կիրառվում է հեղուկ հանուկի, <<Ֆլամին>> պատրաստուկի ձևով, ծաղիկները ներառված են լեղամուղ հավաքների կազմի մեջ:

Սոֆորա ճապոնական (կոկոն, պտուղ)

Քիմիական կազմ

Ծաղիկներում պարունակվում է ֆլավոնոլային գլիկոզիդ՝ ռուտին (մինչև 20%), որը կվերցնեինի 3-ռամնոգլյուկոզիդ ձևն է:

Պտուղներում բացի ռուտինից առկա է նաև ֆլավոնոիդային գլիկոզիդներ՝ կեմպֆերոլ-3-սոֆորոզիդ, գենիստեին (սոֆորոզի շաքարային մնացորդն է):

Կիրառում

Ծաղիկներից անջատում են ռուտին, որը թողարկվում է փոշու, դեղահաբերի ձևով, և կիրառվում է որպես P վիտամինային միջոց պրոֆիլակտիկ և բուժման նպատակով՝ P հիպո-, ավիտամինոզի դեպքում, որոնք ուղեկցվում են անոթների թափանցելիության խանգարմամբ (հակակոագուլյանտների, սալիցիլատների կիրառման հետևանքով առաջացող):

Ծաղիկներից անջատում են կվերցնեին, որը կիրառվում է նույն նպատակով, ինչպես ռուտինը:

Պտուղները ոգեթուրմի ձևով կիրառվում են լվացումների, թրջոցների ձևով, որպես ռեգեներացնող, բակտերիցիդ միջոց՝ տրոֆիկ խոցերի, դժվար բուժելի վերքերի դեպքում: Բակտերիցիդ ազդեցությունը պայմանավորված է կվերցնեինով և գենիստեինով:

Առնիա սևապտուղ (թարմ պտուղներ)

Քիմիական կազմ

Թարմ պտուղներում պարունակվում է ցիանիդին գլիկոզիդ, ֆլավոնոնային գլիկոզիդ՝ հեսպերիդին, ֆլավոնոլային՝ ռուտին, կվերցնեին՝ ազատ ձևով: Նաև՝ կատեխիններ, դաբադային նյութեր, ասկորբինաթթու, օրգանական թթուներ, միկրոտարրեր, շաքարներ (գլյուկոզա, ֆրուկտոզա, սախարոզա):

Կիրառում

Թարմ պտուղներն օգտագործվում են պրոֆիլակտիկ և բուժման ձևով՝ P-վիտամինի անբավարարության, I և II աստիճանի հիպերտոնիայի, և այլ հիվանդությունների՝ ուղեկցվող զարկերակային գերճնշմամբ: Պտուղները հակացուցված են արյան բարձր մակարդեղիության, ստամոքսի և 12-մատնյա աղու խոցային հիվանդության, հիպերացիդ գաստրիտի դեպքում:

Թարմ պտուղներից ստացվող հյութը պարունակում է 0.5% P վիտամին: Կիրառվում է նաև դեղահաբերի ձևով:

Իզոֆլավոնոիդներ
Եզնարգել դաշտային (արմատ)

Քիմիական կազմ

Պարունակում է իզոֆլավոնային գլիկոզիդներ՝ **օնոնին**, որի ազլիկոնը ֆորմոնետինն է, **օնոսպին**, որի ազլիկոնը օնոնետինն է:

Կիրառում

Կիրառվում է ոզեթուրմի ձևով՝ թուրքի բուժման համար, նաև խթանում է դիուրեզը:

Դաբադային նյութեր պարունակող դեղաբուսական հումքեր

Խառը տիպի դաբադանյութեր

Կադնի սովորական (կեդն)

Քիմիական կազմ

Կեդնում պարունակվում է 7-12% դաբադային նյութեր, որոնք առաջանում են կատեխինի օքսիդացիոն պոլիմերիզացիայից: Դաբադային նյութերի կազմի մեջ հայտնաբերվել է ազատ ձևով գալլաթթու, էլլագաթթու և կվերցետին: Կեդնում առկա է պենտոզաններ, պեկտինային թթու:

Կիրառում

Եփուկի ձևով կիրառվում է որպես կապող, հակաբորբոքային միջոց ողորումների ձևով՝ գինգիվիտի, ստոմատիտի, բերանի խոռոչի, կոկորդի այլ բորբոքային երևույթների դեպքում: Թրջոցների ձևով կիրառվում է այրվածքների դեպքում: Ներառված է տարբեր հավաքների կազմի մեջ: Օժտված է արտահայտված հոտը շտկող ազդեցությամբ, ինչի շնորհիվ կիրառվում է բերանի տհաճ հոտ դեպքում:

Կոնդենսված դաբադանյութեր

Մատնունի ուղիղ (կոճղարմատ)

Քիմիական կազմ

Կոճղարմատում պարունակվում է 15-30% դաբադային նյութեր, որի կազմի մեջ առկա է ազատ էլլագաթթու: Առկա են նաև տրիտերպենային սապոնիններ՝ տորմենտոլիդ (սապոգենինը՝ տորմենտոլ), α -ամիրինի շարքի՝ խիննաթթու (սապոգենինը՝ խինոլին): Ինչպես նաև՝ օսլա, կամեդներ, խեժեր:

Կիրառում

Եփուկի ձևով կիրառվում է բերանի խոռոչի բորբոքային երևույթների (ստոմատիտ, գինգիվիտ), էնտերիտի, էնտերոկոլիտի, էկզեմայի, ստամոքսի թթվայնության խանգարումների դեպքում:

Հապալասենի մրթենային (պտուղ, ընձյուղ)

Քիմիական կազմ

Պտուղները պարունակում են մինչև 12% կոնդենսված դաբաղային նյութեր: Պտուղների կարմրամանուշակագույն գունավորումը պայմանավորված է անտոցիանային գլիկոզիդներով՝ դելֆինիդինով, մալվինիդինով, որոնք հայտնի են միրտիլլին անվան տակ: Թթվաքաղցրավուն համը պայմանավորված է շաքարներով (սախարոզա՝ 5-20%), օրգանական թթուներով (կիտրոնա-, խնձորաթթու մինչև 7%): Պտուղներում առկա են նաև ասկորբինաթթու, կարոտին, վիտամին B₁, պեկտինային նյութեր:

Տերևները հարուստ են դաբաղային նյութերով (մինչև 20%), ֆենոլային միացություններով՝ արբուտին, հիդրոխինոն, նաև՝ միրտիլլինի խմբի անտոցիաններով, կվերցետինով, տրիտերպենային սապոնիններով:

Կիրառում

Կիրառվում է որպես թույլ կապող և դիսպեպտիկ միջոց՝ աղեստամոքսային տրակտի սուր և քրոնիկ խանգարումների դեպքում, մասնավորապես երեխաների մոտ: Ներառված է կապող հավաքների կազմի մեջ: Կիրառվում է սննդարդյունաբերության մեջ: Հապալասենու տերևները նվազեցնում են շաքարի քանակությունն արյան մեջ, որը պայմանավորված է միրտիլլին գլիկոզիդով: Պտուղներն օգտագործվում են ջրաթուրմի, եփուկի ձևով:

Հիդրոլիզվող դաբաղանյութեր

Աղտոր դաբաղային (տերևներ)

Քիմիական կազմ

Պարունակում է մինչև 15% գալլոտանին (բնորոշ է աղտորին), որն առաջանում է գալլաթթվից և նրա մեթիլ էթերից: Տերևներում առկա են նաև ֆլավոնոիդներ, որոնց հիմնական մաս կազմում է միրցետինը:

Կիրառում

Կիրառվում է որպես տանինի և նրա պատրաստուկների ստացման համար հումքային աղբյուր:

Դրախտաձառ (տերևներ)

Քիմիական կազմ

Պարունակում է 23-25% գալլոտանին, ինչպես նաև ազատ գալլաթթու: Առկա են ֆլավոնոիդներ՝ միրցետին, եթերային յուղ (0.2%), որի հիմնական մասը միրցենն է:

Մատիտեղ օձային (կոճղարմատ)

Քիմիական կազմ

Կոճղարմատը պարունակում է 15-25% հիդրոլիզվող դաբադային նյութեր, նաև՝ ազատ ձևով գալլաթթու, էլլագաթթու, կատեխին: Առկա են օքսիմեթիլանտրախինոններ, ասկորբինաթթու, օսլա:

Խոտում պարունակվում է ասկորբինաթթու, ֆլավոնոիդներ՝ հիպերոզիդ, ռուտին, ավիկուլարին:

Կիրառում

Հեղուկ հանուկի ձևով կիրառվում է սուր և քրոնիկ փորլուծությունների և աղիների այլ բորբոքային երևույթների դեպքում: Նաև արտաքին՝ բերանի խոռոչի բորբոքային երևույթների դեպքում՝ ստոմատիտ, գինգիվիտ: Ներառված է կապոդ, ստամոքսային հավաքների կազմի մեջ:

Արյունխամիկ դեղատու (կոճղարմատ և արմատներ)

Քիմիական կազմ

Պարունակում է հիդրոլիզվող դաբադային նյութեր, կոճղարմատում՝ 12-13%, արմատներում՝ 16-17%: Ազատ ձևով գալլաթթու, էլլագաթթու, սապոնիններ՝ սանգվիտրին, պոտերին, նաև՝ ստերիններ, օսլա:

Կիրառում

Կիրառվում է հեղուկ և չոր հանուկի ձևով՝ էնտերոկոլիտի, թունավոր և գաստրոզեն փորլուծությունների դեպքում: Որպես արյունահոսությունը դադարեցնող՝ արգանդային, թուրքային արյունահոսությունների դեպքում:

Լաստենի կայչուն (պտղաբույլեր)

Քիմիական կազմ

Պտղաբույլերը պարունակում են գալլոտանին (2-3%), ազատ գալլաթթու՝ մինչև 4%:

Կիրառում

Թրպես կապոդ միջոց ներառված է ստամոքսային (կապոդ) հավաքների կազմի մեջ: